# ԹԻՎ 15 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 8 -Ա

**«25» հոկտեմբեր 2024թ.**

**ք.Մեծամոր**

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի հոկտեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքում տեղի են ունեցել համայնքի ղեկավարի ընտրություններ:

2024 թվականի հոկտեմբերի 20-ին թիվ 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով թիվ 15/01 տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների արձանագրությունը՝ ամփոփել է Ֆերիկ համայնքի ղեկավարի ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները և արձանագրությունով վավերացրել:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 74-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում ՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագություն՝ համայնքում քվեարկության արդյունքների վերաբերյալ»:

Նշված իրավանորմի պահանջների հաշվառմամբ, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընտրական օրենսգրքի սահմանված կարգով և ժամկետներում թիվ 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը իրականացրել է Ֆերիկ համայնքի թիվ 15/01 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկ, որից հետո քվեարկության արդյունքները մնացել են անփոփոխ՝ թիվ 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2024 թվականի հոկտեմբերի 25-ին կազմել է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ: 2024 թվականի հոկտեմբերի 20-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ղեկավարի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել:

2024 թվականի հոկտեմբերի 20-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ղեկավարի ընտրությունների

նախապատրաստման և անցկացման ընթացքում թիվ 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով դիմումներ (բողոքներ) չեն ներկայացվել:

Թիվ 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է 2024 թվականի հոկտեմբերի 20-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ղեկավարի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 15/01 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը և 2024թ. հոկտեմբերի 22-ին կազմած արձանագրությամբ հաստատել, որ քվեարկության օրը՝ 2024 թվականի հոկտեմբերի 20-ին տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում խախտումների վերաբերյալ գնահատականներ արձանագրված չեն:

Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ 7-րդ օրը հիմք ընդունելով համայնքում քվեարկության արդյունքների արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովում ստացված դիմումների բողոքների քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընդունած որոշումը, ամփոփում է համայնքում քվեարկության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ» :

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով՝ թիվ 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է**

2024 թվականի հոկտեմբերի 20-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ղեկավարի ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել Ընտրական օրենսգրքի խախտումներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա:

***Թիվ 15 ընտրատարածքային***

***ընտրական հանձնաժողովի նախագահ՝*** ***Մ. Հովհաննիսյան***

ԹԻՎ 15 ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԸՀՀ N15